

դարձվել կես մանապարհից /եկեղեցու բակից/, գ/ մինչև գերեզմանոց հասնելու մանապարհի հաջորդ կեսը սգո թափորին առաջնորդել է հեծ-
յալներին խումբը՝ ձիախողով /շիրինդ/ ու հրացանածգությամբ, դ/
ննջեցյալի հետ համախ թաղել են նրա սիրած իրը, երբեմն նաև՝ կնոջ
հյուսքեն ծամբ:

Այս ամենը, քստ երևույթին, թաղման ծեսի հնավուրց այն սովոր-
ույթի արձագանքն է, երբ հանգուցյալի հետ գերեզման են իջեցվել
նրա անձնական իրերը, այդ թվում նաև կնոջն ու ծին, մի երևույթ,
որ լավագույնս վկայում է հայոց էթնիկ մշակույթի մեջ ժառանգորդ-
ման հզոր մեխանիզմի գործելը:

5. XIX դ. վերջին - XX դ. սկզբին Աղձնիքում կենցաղավարած
թաղման արարողությունը քնդհանուր գծերով հույժ հարազատ էր Հա-
յաստանի այլ պատմա-ազգագրական շրջանների համանման սովորույթին:
Սակայն, ինչպես ցույց են տալիս նյութերը, ծեսի առանձին մանրա-
մասերը բնորոշ են եղել միայն ուսումնասիրված շրջանին: Երբեմն էլ,
աղձնիքյան տարբերակի ինչ-ինչ տարրեր որոշ գուգահեռներ ունեն ու-
րիշ ժողովուրդների նույնատիպ սովորույթների մեջ:

ԱՆՈՒՇԱՎԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԳԵՏԱՅԻՆ ԶԿՆՈՐՍՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

ՍԵՎԱՆԻ ԵՎ ԿԱՄՈՅԻ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

1. Գրավոր և մեր իսկ հավաքած դաշտային նյութերը վկայում են
ոչ վաղ անցյալում Սևանի ավազանի ձկնաշխարհի բավական առատ լինելը:
Ըստ ավանդության, երբ առաջին վերաբնակիչները XIX դ. 30-ական թվա-
կանների սկզբներին եկել են Սևանի ավազան և սայլերով անցել գետե-
րը, ծուկն այնքան առատ է եղել, որ ջուրը կարմրել է սայլի անիվնե-
րի տակ: Ջրի ալիքներն փի են նետել ձկան կույտեր, գետից ջուր վեր-
ցրելիս ձկները լցվել են դուլլի ու կծի մեջ, գետից ծուկ են վերց-
րել մաղով ու սալայով, գետում բուրդ վանալիս ձկներն ընկել են
ըրդի մեջ, արտերը ջրելիս վիտացել մարգերում:

2. XIX դ. 30-ական թթ. մինչև մեր դ. 50-ական թթ. կիրառվել
են գետային ձկնորսության ժողովրդական մի շարք եղանակներ, այսինքն՝
ծուկ են բռնել հետևյալ կերպ. ա/ չանգալով. նրկայնքը՝ 1-1,5մ.,
ծայրին՝ կեռ, վայտն կոթունով: Գետում նկատելով խոշոր ձկների,
խփել են չանգալով և դուրս հանել, բ/ գուլայով. նրկայնքը՝ 3-4 մ.,

3-4 կեռիկով: Զուլան գցում էին շուրը և քաշում. , , շուրը փոցխում էին, , : 1946 թ. Գավառագետից երեք ժամում գոլայով հանել են 700 ծուկ՝ շուրջ 400 կգ, գ/ թարփով /կողով/. այն գործել են ուռնետու մյուզերից, նման է շուռ տված թանաքամանի, երկայնքը՝ 1,20-1,50 սմ: Դա կրկնակի կողով է, բերանը լայն: Երբ ծուկը ներս է քնկել, այլևս դուրս գալ չէր կարող: Թարփի ծայրը կապել են ուռնետու մյուզերով և երբ այն լցվել է, քանդել են կապը և ծուկը դատարկել, դ/ ձեռաց թոռով. գործել են բամբակե թելերից, մեղք գործիքով ու թրով: Երեք-չորս օղակը մեկ, ծանրացնելու նպատակով, թոռի բերանի շուրջը կապել են մի կտոր արմիմ /գյուլլա/, ամբողջ թոռի համար պահանջվել է 150 կտոր: Թոռով ծուկ որսալիս մի ձեռքի դաստակին կապել են թոռի բերանի թելը, թոռը կիսով չափ հավաքել մյուս ձեռքի վրա, մի արմիմը դրել բերանը և միաժամանակ գետը գցել հավաքած թոռն ու բերանի արմիմը: Ձկները մտնելով թոռի տալրակների մեջ, այլևս դուրս գալ չեն կարողանում, ե/ պարկով. այն դրել են գետի նեղ հատվածում, ջրի հոսանքին հակառակ, երկու ոտքով կանգնել պարկի երկու ծայրին, իսկ ձեռքով բարձրացրել պարկի բերանը: Երկու մարդ փայտերը ջրի մեջ շարժելով, աղմկելով, ձկներին քշել են դեպի պարկի բերանը, գ/ լենդր-սիզգայով. դա կլոր կամ ուղղանկյան տեսքով մետաղալարին փաթաթված ձկնորսական ցանցի մի կտոր է եղել, որը ամրացվել է գետերում կառուցված բետոնե պատնեշների տակ: Քանի որ ծուկը գնում է ձվադրելու այն ջրերում, որտեղ ինքն է , , ծնվել, , /չարգաբանված երևույթ/, ապա լժից անցնելով գետը և հասնելով պատնեշին, ծուկը 0,5 մ. վեր է ցատկել և երբեմն չհաղթահարելով պատնեշը, քնկել սիզգայի մեջ, է/ ավաղով /մաղազ/. երբ աշտանը ջրերը սկսում են սառչել, փոխել են գետի հունը և խոշոր քարերից ու մներից պատրաստել , , ձկան օջախ, , : Դրա պատերը տույլաբա ծածկել են քարե սալերով, իսկ ջրի հոսանքին հակառակ թողել փոքր անցք: Ամբողջ կառույցն ավարտելուց հետո, գետի ջուրն ուղղել են նախկին հունով, որով , , ձկան օջախը, , քնկղմվել է ջրում: Ջրի ջերմաստիճանի նվազման հետևանքով, ձկները, թողնված անցքով, մտել են օջախը, ստեղծելով ծվար: 15-20 օր հետո բացել են ավաղը և միակամից հանել մեկից-երկու դուլլ ծուկ, ք/ խշտով. որսել են ինչպես գետում, այնպես էլ լժում: Դա եղանի նման գործիք է, որի երեք կամ հինգ մտից բաղկացած իրանը ամրացվել է

փայտե կոթուներն: թշտիկի մի մատը ուղիղ է, որը հարվածելիս մտել է ձկան մարմնի մեջ, իսկ մյուսները՝ կեռված տարբեր կողմեր, որպեսզի ծուկը մեա այդ կեռերում և չքույնի շուրջ: Թշտիկի մատերի թաղերն ավարտվում են ձկնորսական կարթերին հատուկ կեռիկներով: Թշտիկով որսած ձկները բոլորից համեղն են:

3. Սևանի և Կամոյի շրջաններում կիրառվել են նաև գետի մյուս-
ընկերակ, ձեռքով, բահով, թարփ-տանգով /կողովի կատարելագործ-
ված ձեռք/ և այլ միջոցներով իրագործվող ձկնորսության ձևերն ու ե-
ղանակները, որոնք, սակայն, համատարած կիրառություն չեն ունեցել:

4. Ավաղով, լենդր-սիգգայով, բահով, խշտով և թարփ-տանգով կա-
տարվող ձկնորսության ձևերն ավելի ուշ շրջանի երևույթ պետք է հա-
մարել, ավելի բնորոշ Սևանի շրջանին, իսկ Կամոյի շրջանի գյուղե-
րում դրանք չեն կիրառվել /բացառությամբ լենդր-սիգգայի/:

5. Ընդգրկված շրջանների գետային ձկնորսության ժողովրդական ե-
ղանակները, այսպիսով, զգալի հետաքրքրություն են ներկայացնում և
դրանց համադրական հետազոտությունը լմային ձկնորսության և Հայաս-
տանի մյուս շրջանների համանման եղանակների հետ, կարող է նպաստել
հայերի՝ տվյալ բնագավառում ունեցած էթնոմշակութային հմտություն-
ների լուստբանմանը, մի բան, որ տակավին արված չէ:

ԱՐՄԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

,,ՎիճԱՊ,, ԲԱՐԱԿՈՅՈՂՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՀՆԻԵՎՐՈՊԱԿԱՆ

ԱՌԱՍՊԵԼԱՄՍԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հնդեվրոպական վիշապամարտի առասպելի ամպրոպի աստծու հա-
կառակորդ վիշապի անունը կազմվում էր * uel արմատով: Այլ տե-
ղում ցույց ենք տվել, որ ,,վիշապ,, / իրան. *vēšap* / քարա-
կոթողները հայերեն կոչվել են գեղ< * uel:

Հմտ. քարակոթողների առավելագույն խտությունը Գեղամա լեռ-
ներում, Գեղարքունիքում /< ուրարտ. *uelikuri*/, Գեղ լեռան վրա,
,,վիշապների,, մի խմբին հարևան ամրոցի Գեղի անունը, վրաց. *gveli*
,,օձ,, բառը, որը փոխառություն է հին հայերենից, երբ * u-ն գ
դառնալու միջանկյալ վիճակում էր, ևն:

2. Քարակոթողների վրա համախ պատկերված է ցլի գլուխ /ցուլը հայ
և հարևան ժողովուրդների և, ամենայն հավանականությամբ, նաև հին
հնդեվրոպացիների պատկերացումներում ամպրոպի աստծու մարմնավո-
րումն է/՝ տիեզերական եռամաս ծառի ձևով փոխած ցլի մորթու վերե-